

կշտանալէ ետք, կ'ելլէին դուրս, իրար քաշքշելով, թեւ թեւի, մուշտակին, բոյրին, ձայնին, նուազներուն ու մերկութիւնները այլապէս հոտաւէտ սրունքները դէպի: Մուրացկանը, ծեր ու անկար, Մաթիկին բերնին մէջ թեմա մըն էր, թէեւ որոշ յոյզով մը: Կար, միշտ այդ բերնին մէջ, աւելի մեծը, - թշուառութի՛ւնը գործաւորին, որ նեարդ-նեարդ կը հանէր հացը իր զաւակներուն, սեփական իր մարմինէն, չնմանելով մեր բանուորին, որ հողէն կը գտնէր իր գոհողութեան մէջ որոշ բարիք: Գոնէ՛ ազատ օդ: Աղուոր ջո՛ւր: Քիչ մեղք: Իր ըսածներուն ո՛չ միայն ետեւն էր անիկա, այլեւ՝ ներսը, լման, «խորասոյզ» կ'ըսեն մեր գիրքերը: Համոզումին ջերմութի՛ւնը, որ վարակիչ էր չափազանց ու կ'անցնէր իմ ալ դիւրայոյզ խառնը-լածքին, քանի որ աշխարհին այդ անհուն զրկանքը ես ունէի իմ բջիջներուս ներսը, մեծ բառով մը՝ աղամանդի պէս ընդելոյզ: Քաղաքի բանուորներ էինք մենք, տունով, հայրս, հողերուն վրայ ուրիշին: Մայրս, ես՝ մետաքսի վրայ: Ու ահաւոր, այնքան մօտիկ այդ անցեալը դեռ ժամանակ չէր գտած մեղմանալու, պաղելու՝ քաղաքէն գեղերը դարձնաւ ետք: Գիտէք որքան քիչ էր գեղջկականը այդ գեղերուն մէջ: Ատկէ՛ թերեւս իմ տրամադրութիւնը ամբողջ մարդկութեան երկաթագրուած սա տառապանքը դիմաւորելու կրկնապատիկ ուժգնութեամբ: Երիտասարդ էի ու տառապանքը կար իմ ամէն մէկ մասիս մէջ: Տառապանքը, զոր տասը գրագիր անկարող են սեւեռել թուղթին: Ու կը զգայի, թէ իմ մանկութիւնը, պատանութիւնը այնքան սեւ, այնքան արցունքով թաց, խաղ ու հարսնիք էին մօտիկը գրուած սա ընդարձակ ողբերգութեան: Մաթիկ կը խօսէր բանուորներուն անօթութեանն ու իմ մտքին կը շինուէին, կայծակնային արագութեամբ տարիները իմ մանկութեան: Անօթի՞: Էի անշուշտ, օրով, երբեմն շաբաթով, երբեմն լման ամսով: Բայց չէր ուշանար պահը, երբ կը բացուէին սահանքները առատութեան, տօնի մը, հարսնիքի մը, կնուէնքի մը,